«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

ԱՐՑԱԽԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ

Լիլիթ Ազարյան
ՀՊՏՀ, Միջազգային տնտեսական հարաբերություններ ամբիոն, ասպիրանտ
azalili@mail.ru

Շուշան Մովսիսյան
ՀՊՏՀ, Միջազգային տնտեսական հարաբերություններ ամբիոն, ասպիրանտ
shushanmovsisyan@gmail.com

Աշխարհաքաղաքական շահերի բախման տեսանկյունից Հարավային Կովկասը կարելի է համարել աշխարհի «թեժ» տարածաշրջաններից մեկը: Այստեղ առկա են մի քանի սառեցված հակամարտություններ, որոնց շարունակական լինելը ստեղծում է ազգային անվտանգության լուրջ սպառնալիքներ:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրն ունի շուրջ հարյուրամյա պատմություն: Դրա ներկա փուլը սկսվել է 1988 թ., երբ ի պատասխան Արցախի բնակչության ինքնորոշման պահանջի, Ադրբեջանում կազմակերպվեցին հայ բնակչության կոտորածներ ու էթնիկ զտումներ երկրի ողջ տարածքում՝ Սումգայիթում, Բաքվում և Կիրովաբադում: Ադրբեջանական վայրագությունների առաջին պաշտոնական հակազդեցությունը ԼՂՀ անկախության հռչակումն էր, որն ամրագրվեց 1991 թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեով և, որը լիովին համապատասխանում էր միջազգային իրավունքի նորմերին և ԽՍՀՄ օրենքներին:

Հարևան պետությունը մտադիր չէր հաշվի նստելու ԼՂՀ բնակչության ազատ կամարտահայտության հետ, որին հաջորդած պատերազմը կործանարար հետևանքներ ունեցավ ոչ միայն Արցախի, այլ նաև Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա: Հիմնահատակ ավերվեցին արդյունաբերական գրեթե բոլոր ձեռնարկությունները: Ընդհանուր առմամբ Արցախին հասցված վնասը գնահատվել է 2.5-3 մլրդ ԱՄՆ դոլար[1]:

Այնուհանդերձ, հրադադարի հաստատումից հետո նորաստեղծ ԼՂՀ-ն պատերազմից ավերված տնտեսության վերականգնմանը զուգահեռ ձեռնամուխ է եղել տնտեսական բարեփոխումների իրականացմանը:

Տնտեսական զարգացումը, բնակչության բարեկեցության բարձրացումն այն հիմքերն են, որոնք ձևավորվում, անշրջելի են դարձնում ԼՂՀ փաստացի անկախությունը: Այդ կապակցությամբ Իսրայելի առաջին վարչապետ Դավիդ բեն Գուրիոնը նշել է. «Չկա քաղաքական անկախություն առանց տնտեսական անկախության»[2]: Կարծում ենք, տնտեսական անկախության ձեռքբերումը հատկապես կարևոր է չճանաչված պետությունների համար, որը ենթադրում է երկրի առջև ծառացած քաղաքական խնդիրների լուծման համար բավարար տնտեսական ներուժի ստեղծում: Հասկանալի է, որ տնտեսական ոչ բավարար ռեսուրսների տնօրինող Լեռնային Ղարաբաղը չի կարող զարգանալ առանց մնացած աշխարհի հետ սերտ և փոխշահավետ տնտեսական համագործակցության, այնուհանդերձ առկա տնտեսական ներուժի արդյունավետ օգտագործումը առաջնահերթ խնդիր է, որը թույլ կտա հնարավորինս

[1] Մելքումյան Մ. Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Եր., 2005, էջ 375:
[2] http://maof.rjews.net/aspect/33-economics/26307-q-q

հաղթահարել տնտեսության հիմնական մարտահրավերները և հնարավորինս դրանք հաղթահարել սեփական ուժերով: Կայուն տնտեսական զարգացման բաղադրիչներ են համարվում

- երկարաժամկետ հատվածում ՀՆԱ աճի դրական միտումները,
- ՀՆԱ-ի և տնտեսական ներուժի՝ արտակարգ իրավիճակներում ի հայտ եկող կորուստների արագ վերականգնումը,
- ՀՆԱ ճյուղային կառուցվածքը,
- ներդրումների բաշխման անհամամասնությունները,
- նորարարական հնարավորությունները:

Կայուն տնտեսական զարգացման կարևորագույն ցուցանիշը տնտեսության ճյուղերի համամասնական զարգացման ապահովումն է: Այս առումով պետք է նշել, որ Խորհրդային իշխանության տարիներին Լեռնային Ղարաբաղի տնտեսությունը ինտեգրված էր պլանային տնտեսությանը բնորոշ գործընթացներին, որտեղ բոլոր տնտեսական հիմնախնդիրները լուծվում էին մեկ կենտրոնից, իսկ մարզի պարագայում այն նաև սրբագրվում էր Բաքվում: Դա հանգեցրել էր մարզի միակողմանի զարգացմանը. Լեռնային Ղարաբաղի բնակչությունը հիմնականում զբաղված էր գյուղատնտեսությունում (առկա էր 77 կոլեկտիվ տնտեսություն): Արդյունաբերությունը գլխավորապես հիմված էր տեղական հումքի վերամշակման վրա՝ գործում էին 14 գինեգործարաններ, մսի և կաթի կոմբինատներ[1]: Տեղական հումքի վրա էր աշխատում «Ղարմետաքսկոմբինատը», որի արտադրանքը, Ադրբեջանի վարած քաղաքականության պատճառով, որպես արցախյան արտադրանք բավարար ճանաչում չուներ: Բավականաչափ զարգացած էր նաև կահույքագործությունը, Ստեփանակերտում տարեկան միջին հաշվով արտադրվում էր 6 մլն ռուբլու կահույք[2]:

Խմիչքի արտադրությունը Արցախի Հանրապետության տնտեսության ավանդական ճյուղերից է: 1980-ական թվականներին մարզում արտադրվել է 1 մլն 946 հազ. դեկալիտր գինի, որը հետագա տարիներին հակաալկոհոլային պայքարի շրջանակներում զգալիորեն կրճատվել է՝ հսկայական վնաս հասցնելով ոլորտին: 2001 թ. գինու արտադրության ծավալը կազմում էր ընդամենը 10.5 հազ դեկալիտր[3]:

ԼՂՀ տնտեսությունում գրեթե միշտ մեծ տեսակարար կշիռ է ունեցել լեռնահանքային արդյունաբերությունը, այդ թվում մետաղի հանքաքարի արդյունահանումը, քարհանքերի շահագործումը և այլն: Խորհրդային իշխանության տարիներին գյուղատնտեսությունը և թույլ զարգացած արդյունաբերությունը դարձան սոսկ հումքի մատակարարներ, ինչը բացասաբար ազդեց մարզի տնտեսության վրա:

Արցախի Հանրապետության տնտեսության կառուցվածքում անցած տարիների համեմատությամբ էական տեղաշարժեր չեն գրանցվել: Սննդի (օղու, գինու, կոնյակի, պահածոների) և թեթև (մետաքսե գործվածքների, գորգագործական, կոշիկի, կարի) արդյունաբերության ճյուղերը շարունակում են պահպանել իրենց գերակա դիրքերը: Գործում են նաև շինանյութերի, փայտամշակման և այլ ընկերություններ, արդյունահանվում է գրանիտ, կրաքար, ավազ, մշակվում է ծխախոտ, հացահատիկային և կերային մշակաբույսեր, թթենի, որի հիման վրա զարգացել է շերամապահությունը, օղու և դոշաբի

[1] http://theanalyticon.com/?p=607
[2] Նույն տեղում, էջ 384:
[3] Նույն տեղում, էջ 382:

արտադրությունը: Ներկայումս հացահատիկի ու մսամթերքի արտադրության ծավալները գերազանցում են ներքին պահանջարկը, իսկ ավելցուկն արտահանվում է ՀՀ: Արագ տեմպերով զարգանում է անասնապահությունը, հեռանկարային ճյուղ է մեղվաբուծությունը, հատկապես Քաշաթաղի և Քարվաճառի (այժմ՝ Շահումյանի) շրջաններում, որտեղ հնարավոր է կազմակերպել նաև էկոլոգիական մաքուր մեղրի արտադրություն:

Խորհրդային տարիներին Արցախի տնտեսությունը մեծամասամբ հենվում էր թեթև արդյունաբերության (մետքս, կոշիկ, գորգերի արտադրություն) և գյուղատնտեսության վրա, որի եկամուտների կեսն ապահովում է խաղողագործությունը:

Գյուղատնտեսությունը հանրապետության տնտեսության առանցքային ոլորտներից մեկն է և չափազանց մեծ դեր ունի երկրի անվտանգության ապահովման և կենսագործունեության, տնտեսության կայունացման գործում (2016 թ. ՀՆԱ-ի 30.7%[1]): Սոցիալ-տնտեսական առումով, գյուղատնտեսության դերը գնահատվում է նաև նրանով, որ երկրի բնակչության մոտ կեսն ապրում է գյուղական բնակավայրերում: Սակայն պետք է նշել, որ գյուղատնտեսական արտադրանքով ինքնապահովման խնդիրը Հանրապետությունը դեռևս չի լուծել: Ինչ վերաբերում է գյուղատնտեսական հումքի վերամշակմանը, ապա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ 2007 թվականին սննդի արդյունա-բերության տեսակարար կշիռը կազմել է 19.3 տոկոս, իսկ ընդհանուր մշակող արդյունաբերության մեջ՝ 55.3 տոկոս[2]:

Բավականին արագ տեմպերով զարգանում է արդյունաբերությունը՝ հատկապես մետաղի հանքաքարի արդյունահանումը (2015 թ. կազմել է ՀՆԱ-ի 25.6%[3]):

Էներգետիկ համակարգը, հանդիսանալով տնտեսության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածք ԱՀ-ում, դիտվում է նաև որպես գերակա ճյուղ: Արցախի Հանրապետությունը ձգտելով էներգետիկ անկախության, իրականացնում է փոքր ՀԷԿ-երի ավելացման քաղաքականություն: 2016թ. 9 ամիսների արդյունքներով՝ արտադրված էլեկտրաէներգիայի ծավալը գերազանցել է սպառումը, և շուրջ 5.0 մլն կվտ էլեկտրաէներգիա արտահանվել է ՀՀ[4]: Արցախի տնտեսության ամենաերիտասարդ, բայց ռազմավարական ու հեռանկարային ճյուղերից է հանքարդյունաբերության ոլորտը: 2016 թ. հանքագործական արդյունաբերության ծավալը կազմել է 17119,6 մլն դրամ (արդյունաբերական արտադրանքի 29 %-ը):

Հեռանկարային ճյուղ է հանդիսանում նաև զբոսաշրջությունը, ինչի մասին վկայում է Արցախ այցելող զբոսաշրջիկների թվաքանակի աճը: 2014 թ. դեկտեմբերի կեսերին, 2012 թ. սկզբից հաշված՝ այստեղ այցելել է 15.000-րդ զբոսաշրջիկը (Ավստրալիայի քաղաքացի): Հանրապետության ԱԳՆ տվյալներով՝ օտարերկրացի զբոսաշրջիկների թիվը 2015 թ. հունվար-նոյեմբերին՝ անցած

---

[1] Լեռնային Ղարաբաղը թվերով 2016, http://stat-nkr.am/files/publications/2016/LXH_tverov_2016.pdf, էջ 46:

[2] http://minagro.nkr.am/%D5%AC%D5%B2%D5%B0-%D5%A3%D5%B5%D5% B8%D6%82%D5%B2%D5%A1%D5%BF%D5%B6%D5%BF%D5%A5%D5%BD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%AF%D5% A1%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%A6%D5%A1%D6%80%D5% A3%D5%A1%D6%81

[3] նույն տեղում

[4] http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15281

տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, աճել է 31.8%-ով[1]: Հեռանկարային են հատկապես էթնոզբոսաշրջությունը, էկոզբոսաշրջությունը, մշակութային զբոսաշրջությունը և արկածային զբոսաշրջությունը[2]:

Վերջին տարիներին Արցախի Հանրապետության տնտեսությունը բնութագրվել է տնտեսական ակտիվության բարձր ցուցանիշներով, մասնավորապես, վերջին տասը տարիների ընթացքում (2007-2016 թթ-ին) միջինը գրանցվել է համախառն ներքին արդյունքի 9,4% իրական աճ: Այդ տարիների տնտեսական աճին նպաստել են տնտեսության բոլոր ճյուղերը, առավելապես ծառայությունների ոլորտը՝ միջինը 7.4 տոկոսային կետով և գյուղատնտեսության ոլորտը, որը շարունակական աճի բարձր տեմպեր է ապահովել 2008 թ. կտրուկ անկումից հետո: Հատկանշական է, որ 2007-2016 թթ. ընթացքում բնակչության բարեկեցությունը բնութագրող՝ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի մեծությունը կրկնապատկվել է:

Համախառն ներքին արդյունքը 2016 թ. կազմել է 229.3 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ ՀՆԱ-ն աճել է 9.2%-ով: Արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 59 մլրդ 999,5 մլն դրամ՝ 9,7%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: 2016 թ. Արցախում իրականացվել է 45.7 մլրդ դրամի շինարարություն՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 8 %-ով:

Արտաքին առևտրաշրջանառությունը կազմել է 337 մլն 965 հազ. ԱՄՆ դոլար, այդ թվում արտահանումը՝ 81 մլն 106.3 հազ. ԱՄՆ դոլար, ներմուծումը՝ 256 մլն 85.9 հազ. ԱՄՆ դոլար: Արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2015 թ. նկատմամբ ավելացել է 7.4 %-ով. ընդ որում՝ արտահանումն աճել է 30.6%-ով, ներմուծումը՝ 1.7%-ով[3]: Առևտրային հաշվեկշռի պակասուրդը կրճատվել է 7.7 %-ով[4]:

Արտաքին ապրանքաշրջանառության համատեքստում հիմնական խնդիրները արտահանման ապրանքային և աշխարհագրական կառուցվածքներն են: Արտահանումն ունի ընդգծված հումքային բնույթ: ԱՀ առևտուր է անում ավելի քան 20 երկրների հետ, սակայն արտաքին ապրանքաշրջանառության ավելի քան 90%-ը բաժին է ընկնում Հայաստանի Հանրապետությանը:

---

[1] Կարապետյան Ս., ՀՀ և ԼՂՀ զբոսաշրջության հետագա զարգացման նախապայմանները, դրանց վերլուծությունն ու գնահատումը, Բանբեր 2016, էջ 112:

[2] http://aparaj.am/new/արցախի-մրցակցային-առավելությունը-շա/

[3] http://armef.com/news/category/official/article/article_1398100223

[4] http://stat-nkr.am/files/publications/2016/doklad_2016_hunvar_dektember/4_2_1__Art_ar%202016.pdf

Աղյուսակ 1. ԼՂՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները[1]

	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
ՀՆԱ										
համախառն (մլն ԱՄՆ դոլար)	206.8	284.8	281.7	316.3	363.8	373.4	411.5	454.03	438.03	477,9
1 շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	1489	2036	1992	2203	2513	2546	2778	3048	2959	3282
Իրական աճի տեմպը	108,8	114,3	113,1	105,5	109,1	109,9	109,3	108,9	109,1	109,2
Արդյունաբերություն (մլրդ դրամ)	22,4	25,3	34,1	43	45,8	40,9	44,3	51,6	53,5	59,0
Գյուղատնտեսություն(մլրդ դրամ)	23,8	31,1	30,6	32,1	40	50,3	55,2	57,3	64,3	68,5
Շինարարություն(մլրդ դրամ)	20,8	25,8	34,5	42,8	43,3	38,3	45,2	49,7	50,1	45,7
Արտաքին առևտուր մլն ԱՄՆ դոլար	277.4	305	294	348.2	392.7	349	328.5	366,7	314,5	338
արտահանում	72.5	55.0	57.3	74.8	79.6	57.8	59.6	64,7	62,1	81,1
ներմուծում	204.8	249.9	236.6	273.4	313.1	291.2	268.8	302	252,5	256,8
Առևտրային հաշվեկշիռ	-129.3	-194.9	-179.3	-198.6	-233.5	-233.4	-209.2	-237.3	-190,4	-175,7
աճի տեմպը	190,4	150,7	92	110,8	117,6	99,9	89,6	113,4	80,2	92,3
ՍԳԻ (%)	104.4	110.6	103.8	108.9	107.1	102.0	104.9	104,5	103,5	

[1] Լեռնային Ղարաբաղը թվերով 2010, 2012, 2014, 2016, տե՛ս http://stat-nkr.am/

ԱՀ-ն համար լուրջ հիմնախնդիր է բնակչության թվաքանակը (2013թ. 146.6 հազ[1]): Արցախի զարգացման ու հզորացման հիմնախնդիրների լուծումը ենթադրում է դրանում ժողովրդագրական իրավիճակի կտրուկ փոփոխություն, վերաբնակեցման հիմնավորված քաղաքականության իրականացում: Վերաբնակեցումն այն կարևոր ռազմավարական խնդիրն է, որի ճիշտ և արդյունավետ իրականացման դեպքում հնարավոր է խթանել ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացումը:

Այսպիսով, Արցախի տնտեսությունը ինչպես և խորհրդային տարիներին շարունակում է ունենալ գյուղատնտեսական ուղղվածություն: Միաժամանակ, պետք է նշել, որ գյուղատնտեսության տեխնիկական ապահովման բնագավառում ևս լուրջ խնդիրներ կան:

Տնտեսության համար հեռանկարային ճյուղեր են հանքագործական արդյունաբերությունը, զբոսաշրջության զարգացումը:

Արցախի տնտեսության զարգացման գործում կարևորագույն դեր ունի նաև ՏՏ ոլորտը, որի խթանումը նպաստում է տնտեսության առաջընթացին, ինչպես նաև բնակչության կենսապայմանների բարելավմանը: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը նշանակալիությունը պայմանավորված է Արցախի Հանրապետության բնական պաշարների, տարածքային և տրանսպորտային ուղիների սահմանափակումներով և միևնույն ժամանակ՝ բնակչության գիտակրթական ներուժի բարձր մակարդակով, բարելավվող գործարար և ներդրումային միջավայրով: ՏՏ ոլորտի զարգացումը կնպաստի ոչ միայն ներքին տնտեսական աճին, այլ նաև միջազգային համագործակցության խորացմանը պետական և մասնավոր հատվածներով:

Արցախի տնտեսական զարգացմանը, ինչպես նաև տնտեսական անվտանգության ապահովմանը մեծապես կնպաստի Ստեփանակերտի օդանավակայանի բացումը, որը անընդհատ ձգձգվում է ադրբեջանական կողմի՝ քաղաքացիական օդանավերին հարվածելու սպառնալիքների պատճառով: Օդանավակայանի բացումը և արտասահմանյան երկրների հետ օդային կապի հաստատումը, տնտեսական օգուտներից զատ, որոշակիորեն կբարձրացնի ԱՀ՝ որպես ինքնիշխան պետության ընկալումը օտարերկրացիների կողմից:

Լիլիթ Ազարյան, Շուշան Մովսիսյան

ԱՐՑԱԽԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ

Բանալի բառեր՝ *Արցախ, քաղաքական անկախություն, տնտեսական աճ, տնտեսական անվտանգություն*

Հոդվածի նպատակն է բացահայտել Արցախի կայուն տնտեսական զարգացման հեռանկարները: Այդ նպատակով ուսումնասիրվել է Արցախի Հանրապետության տնտեսական իրավիճակը, ռեսուրսային ներուժը, բացահայտվել են տնտեսության զարգացման հիմնական խոչընդոտները: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը անցած 26 տարիների ընթացքում կուտակել է միջազգային մեկուսացման պայմաններում տնտեսական զարգացման մեծ փորձ: Հանրապետությունը կարողացել է ստեղծել տնտեսական զարգացման մոդել՝ համահունչ երկրի քաղաքական մարտահրավերներին:

---

[1] http://stat-nkr.am/files/publications/shrjanner_tverov_2006-2012/2_bnakchutyun.pdf

Лилит Азарян, Шушан Мовсисян

УСТОЙЧИВОЕ РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ АРЦАХА КАК ФАКТОР ПОЛИТИЧЕСКОЙ НЕЗАВИСИМОСТИ

Ключевые слова: *Арцах, политическая независимость, экономический рост, экономическая безопасность*

Целью статьи является раскрытие перспектив устойчивого экономического развития Нагорного Карабаха. С этой целью были изучены экономическое состояние и ресурсный потенциал Нагорно-Карабахской Республики, были выявлены основные препятствия для экономического развития. В услових международной изоляции Нагорно-Карабахская Республика за прошедшие 26 лет накопила большой опыт экономического развития. Республика смогла создать модель развития гармонично с политическими вызовами страны.

Lilit Azaryan, Shushan Movsisyan

SUSTAINABLE DEVELOPMENT OF ARTSAKH ECONOMY AS A KEY FACTOR FOR POLITICAL INDEPENDANCE

Key words: *Artsakh, political independance, economic growth, economic security*

The aim of the article is to identify the perspectives of sustainable economic development of Artsakh. For this purpose, economic situation of the Republic of Artsakh, resource potential have been studied. Over the past 26 years Nagorno Karabakh Republic has accumulated extensive experience of economic development in international isolation. Republic managed to create a model of economic development in accordance with political challenges of the country.